ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հուլիսի 2021 թվականի №-----Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի №22Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները և հաշվի առնելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հուլիսի 16-ի №2/9-057 և հուլիսի 21-ի №2/9-059 գրությունները (համապատասխան հիմնավորումներով), որոնցով վերջինս հայտնել է 2020 թվականի դեկտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված №2/9-100 գրության մեջ, որին ի հետևանք նաև Հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 3-ի №22Ա որոշման մեջ տեղ գտած տեխնիկական վրիպակի (այն է՝ «Քանաքեռ» հիդրոէլեկտրակայանում գտնվող №4 տրանսֆորմատորը ոչ թե 4TDTH 16000/110 տիպի է, այլ TDT 15000/110 տիպի) մասին ու խնդրել հիշյալ որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 3-ի «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության գույքի վաճառքին համաձայնություն տալու մասին» №22Ա որոշման 1-ին կետում «4TDTH 16000/110» թվերը փոխարինել «TDT 15000/110» թվերով:
2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2021թ.